ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԻԶԱԲԵԼԼԱ ԴԱՎԹՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր բժիշկ-մանկաբույժ Իզաբելլա Դավթյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սարմենի փողոց հ. 50 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԻԶԱԲԵԼԼԱ ԴԱՎԹՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԽՍՀ վաստակավոր բժիշկ-մանկաբույժ Իզաբելլա Դավթյանը ծնվել է 1920թ. Գորիս քաղաքում: 1942թ. ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: 1942-1947թթ. աշխատել է Երևանի թիվ 1 կլինիկայում՝ որպես բժիշկ մանրէաբան, 1947-1955թթ. եղել է Երևանի թիվ 2 մանկական հիվանդանոցի մանկաբույժը:

1955թ. նշանակվել է Երևանի թիվ 3 մանկական հիվանդանոցի գլխավոր բժիշկ և բժշկական կենտրոնը ղեկավարել է մինչև 1991թ.:

Բուժծառայությունների մատուցման բարձր որակը, աշխատանքի գիտական կազմակերպումը, ինչպես նաև ընդգրկման լայն ոլորտը հնարավորություն ընձեռեցին 1979թ. թիվ 3 մանկական կլինիկական հիվանդանոցը վերապրոֆիլավորել հանրապետական մանկական կլինիկական հիվանդանոցի: Այստեղ Հանրապետությունում առաջինը կազմակերպվեց մոր և մանկան առանձնացված բաժանմունք:

Իզաբելլա Դավթյանի բազմաթիվ աշակերտներ և սաներ դարձել են բժշկական գիտությունների դոկտորներ ու թեկնածուներ, գլխավորում եմ հանրապետության բժշկական հիմնարկներ:

ԽՍՀՄ վաստակավոր բժիշկ Իզաբելլա Դավթյանը պարգևատրվել է մի շարք պետական պարգևներով, որոնցից են ԽՍՀՄ բարձրագույն՝ Լենինի շքանշանը, «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանը և այլն:

ՀԽՍՀ վաստակավոր բժիշկ-մանկաբույժ Իզաբելլա Դավթյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սարմենի փողոց հ. 50 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել «Առողջապահության կազմակերպիչների միավորում» հասարակական կազմակերպության կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԻԶԱԲԵԼԼԱ ԴԱՎԹՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իզաբելլա Դավթյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԻԶԱԲԵԼԼԱ ԴԱՎԹՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իզաբելլա Դավթյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ